ԿԱՐԾԻՔ

ՄԵՐԻ ՀՈՎՍԵՓԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՎԱՂԱԺԱՄ ԱԶԴԱՆՇՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴԵՐԸ ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ (ԵԱՏՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.06 - «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հետազոտության թեմայի արդիականությունը: ՀՀ տնտեսությունը, լինելով փոքր և բաց, խիստ զգայուն է աշխարհում տեղի ունեցող զարգացումների նկատմամբ, ինչը դրսևորվում է ինչպես տնտեսական աճի, այնպես էլ անկման ժամանակահատվածներում: ՀՀ տնտեսության համար բնութագրական է գլոբալ տնտեսական պարբերաշրջանի աճի փուլում համաշխարհային տնտեսության աճի տեմպերը գերազանցող աճը, իսկ անկման փուլում՝ ավելի խոր անկումը: Այս երևույթը բնորոշ է ոչ միայն ՀՀ-ին: Զարգացող երկրների տատանումները սրում են արտաքին ֆինանսական հոսքերը, իսկ մակրոտնտեսական քաղաքականությամբ դրանց արդյունավետորեն հակազդել սովորաբար չի հաջողվում, ավելին՝ մակրոտնտեսական քաղաքականությունն իր հերթին հաճախ դառնում է տատանումները սրող գործոն:

Տարածաշրջանում կամ գլոբալ մակարդակում աճող անկայունությունները անմիջապես խոցելի են դարձնում ինչպես համաշխարհային տնտեսական աճի ապահովումը, այնպես էլ երկրների խմբերի կամ ինտեգրացիոն միավորումների զարգացումը: Համավարակի տարածման, գերտերությունների «առևտրային պատերազմների», ռուս-ուկրաինական պատերազմի, պատ-ժամիջոցների հետևանքներով վերջին տարիներին առաջացել են մատակարարման գլոբալ շղթաների խաթարումներ, վատթարացել համաշխարհային տնտեսական հեռանկարները, փոխարենը ուժեղացել են տնտեսական ռիսկերի հետևանքները: Այս իմաստով քաղաքականություն մշակողները պետք է կատարելագործեն և փոփոխեն տնտեսական անվտանգության ներկայիս համակարգերը՝ հիմքում ունենալով ճգնաժամի ի հայտ գալու հավանականությունը:

Նման իրավիճակը հատկապես կարևոր է դարձնում մակրոտնտեսական քաղաքակա-նության համարժեք և ժամանակին արձագանքը տնտեսության խոցելիությունների կուտակմանը: Ուստի, անհրաժեշտ է կառուցել տնտեսական անվտանգության մակարդակի մշտադիտարկման գործուն համակարգ, որը հիմք կհանդիսանա այդ խոցելիությունների արդյունավետ բացահայտ-

ման և քաղաքականության համապատասխան արձագանքի համար: Հիմնվելով քանակական ցուցանիշների վրա՝ այդպիսի համակարգը հստակ ուղղորդիչ դեր կարող է ունենալ մակրոտնտեսական քաղաքականություն մշակողների համար: Տնտեսական անվտանգության քանակական «ուղղորդիչներ» ներդրված են և գործում են գրեթե բոլոր երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում: Այսպես, «Բյուջետային համակարգի մասին» և «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքներով սահմանվում են պետական բյուջեի պակասուրդի և պետական պարտքի մակարդակի թույլատրելի շեմեր, ՀՀ կենտրոնական բանկը սահմանում է գնաճի թիրախային միջակայքը, ինչպես նաև ֆինանսական կազմակերպությունների համար տնտեսական նորմատիվները: Ավելին, Հայաստանի Հանրապետությունը, ստորագրելով «Եվրասիական տնտեսական միության մասին» համաձայնագիրը, հանձն է առել տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման ժամանակ առաջնորդվել մակրոտնտեսական ցուցանիշների քանակական շեմերով, որոնք վերաբերում են պետական բյուջեի պակասուրդին, պետական պարտքին և գնաճի տեմպին:

Վերոնշյալն ընդգծում է Հայաստանի հակաճգնաժամային քաղաքականության հիմնախնդիրների և ԵԱՏՄ շրջանակներում ճգնաժամերի վաղ ազդանշման համակարգերի ներդրման ակնհայտ կարևորությունը, ինչն էլ պայմանավորում է ատենախոսության թեմայի ***արդիականությունն ու անհրաժեշտությունը:***

Ատենախոսության կառուցվածքը հնարավորություն է ընձեռել բացահայտել հետազոտվող հիմնահարցի բնութագրական կողմերը, ապահովել դրանցով պայմանավորված խնդիրների լուծման հաջորդականությունը, պահպանել առաջարկված մոտեցումների գործնական նշանակության հիմնավորմանը և ամբողջական հետազոտության իրականացմանը հատուկ այլ սկզբունքները:

Աշխատանքի ներածությունում ներկայացված է ատենախոսության թեմայի արդիականությունն ու հրատապությունը, դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները: Այստեղ ամրագրված են այն հիմնական գիտական արդյունքները և դրանց գիտական նորույթը, որոնցով աշխատանքը ձեռք է բերում գիտական արժեք, բնութագրված են տեսական և մեթոդական այն հիմքերը, որոնց վրա կառուցված են հեղինակի մշակումներն ու եզրահանգումները

Ատենախոսության առաջին՝ «Տնտեսական ճգնաժամերը և դրանց վաղաժամ ազդանշման տեսամեթոդական հիմքերը» գլխում, անդրադարձ է կատարվել տնտեսական ճգնաժամերի էությանը և ԵԱՏՄ երկրների տնտեսական անկայունությունների ժամանակագրությանը, ուսումնասիրվել են տնտեսական ճգնաժամերի վաղաժամ ազդանշման համակարգերի էությունը, մշակման էվոլուցիան և «սերունդները», հատուկ ուշադրություն է դարձվել տնտեսական ճգնաժամերի վաղաժամ ազդանշման համակարգերի մեթոդական մոտեցումներին և միջազգային փորձին:

Որոշակի բացառություններով, տնտեսական պարբերաշրջանները ԵԱՏՄ երկրների համար գրեթե համընկել են, սակայն եղել են նաև տնտեսական ճգնաժամային դրսևորումներ առանձին երկրներում, որոնք, հեղինակի դիտարկմամբ, հիմնականում պայմանավորված են եղել խոցելիությունների և արտաքին սպառնալիքների նկատմամբ առանձին երկրների դիմադրողականության տարբերություններով: Անկախությունից ի վեր, ԵԱՏՄ անդամ երկրներում գրանցված ճգնաժամերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Եվրասիական ինտեգրացիոն միության անդամ երկրներում արձանագրվել են արժութային, բանկային, պարտքային, պարտքի վերակառուցման, «կտրուկ կանգի» ճգնաժամեր: Թեև ԵԱՏՄ անդամ երկրներն ունեն տնտեսական զարգացման տարբեր մակարդակներ, սակայն տնտեսական պարբերաշրջաններն ունեն որոշակի ժամանակային համընկնումներ, ինչը հիմք է ստեղծում տնտեսական ճգնաժամերի վաղաժամ ազդանշման արդյունավետ համակարգեր մշակելու ընդհանուր մոտեցումների համար:

Ատենախոսության երկրորդ՝ «Տնտեսական ցնցումների փոխանցումային մեխանիզմն ու ԵԱՏՄ ճգնաժամերի վաղաժամ ազդանշման համակարգը» գլխում, ներկայացվել են մակրոտնտեսական կայունությունը և տնտեսական ցնցումները ԵԱՏՄ անդամ երկրներում, տնտեսական շոկերը և դրանց փոխանցումային մեխանիզմները ԵԱՏՄ-ում, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ երկրների ճգնաժամերի վաղաժամ ազդանշման բազմագործոն համակարգը:

ԵԱՏՄ երկրների մակրոտնտեսական կայունության ուսումնասիրության համար ներկայացվել են ԵԱՏՄ Պայմանագրով սահմանված մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխությունների դինամիկան անդամ երկրներում, հատկապես ԵԱՏՄ կազմավորումից ի վեր: Այդ ցուցանիշներն են՝ գնաճի մակարդակը (սպառողական գների համաթիվ), պետական կառավարման հատվածի պարտքը, պետական բյուջեների պակասուրդը:

Որպես ԵԱՏՄ շոկերի փոխանցման աղբյուրներ առանձնացվել են ազդեցություն ունեցող 3 հիմնական աղբյուրները՝ համաշխարհային տնտեսական աճ, միջազգային ֆոնդային շուկայի անկայունություն և միջազգային հումքային շուկա (նավթի, մետաղների և պարենի միջազգային գներ): ԵԱՏՄ տնտեսություններին այդ շոկերը փոխանցվում են փոխարժեքի, արտաքին առևտրի, օտարերկրյա ներդրումների, պետական բյուջեի ցուցանիշների և գնաճի ուղիներով: Հեղինակի կողմից մշակված համակարգում շոկերի ազդեցությունը դրսևորվում է ԵԱՏՄ տնտեսական աճի, ինչպես նաև երկրների պետական բյուջեների վրա՝ ներգործելով պարտքի բեռի ավելացման վրա:

Հաշվի առնելով ԵԱՏՄ երկրների մի մասին հումքային ուղղվածությունը, համաշխարհային տնտեսության տատանումների ազդեցությունը թուլացված է փոխանցվում այս երկրներին:

Կատարված էկոնոմետրիկ վերլուծությամբ պարզվել է, որ ԵԱՏՄ տնտեսության համար էական են ուսումնասիրված բոլոր աղբյուրներից եկող տնտեսական շոկերը, որոնց համար ընդգծվել են փոխանցումային ուղիների տարբերությունները: Միևնույն ժամանակ, և՛ հումքային ակտիվների գների, և՛ միջազգային ֆինանսական շուկայի պայմանների շոկերը ներգործում են ուսումնասիրված բոլոր ուղիներով, հստակ փոխանցումային մեխանիզմով: Բոլոր շոկերը ի վերջո ներազդում են տնտեսական աճի տեմպի, ինչպես նաև պետական հատվածի խոցելիություններն արտացոլող՝ կառավարության պարտքի բեռի վրա:

Ատենախոսության երրորդ՝ « ԵԱՏՄ վաղաժամ ազդանշման համակարգի արդյունքները ու դերը ինտեգրացիոն գործընթացում» գլխում, դիտարկվել են ԵԱՏՄ վաղ ազդանշման միագործոն համակարգը՝ ազդանշանային մոտեցումը և փոփոխականների շեմային մակարդակները, ինչպես նաև ինտեգրացիոն միավորումներում ճգնաժամերի վաղաժամ ազդանշումը՝ գնահատված շեմային մակարդակների միջոցով:

Ստացված շուրջ 110 շարքերի ուսումնասիրությունից հեղինակը եզրակացնում է, որ ընտրված 18 փոփոխականներից 80-90%-ը ի վիճակի են կանխատեսել ճգնաժամերի տարբեր տեսակներ, իսկ դրանց որոշ մասը նաև կարողանում է կանխատեսելի լինել բոլոր տեսակի ճգնաժամերի համար միաժամանակ և տնտեսական կայունության ապահովման համար ուղենիշային կարևոր ցուցիչներ կարող են համարվել:

Ստացված արդյունքները կարող են արժեքավոր հենք լինել ինչպես ինտեգրացիոն միավորման, այնպես էլ անդամ երկրների քաղաքականություն մշակողների համար, որպեսզի նախա-

գծվեն կանխարգելիչ միջոցառումներ՝ մեղմելու ճգնաժամային իրավիճակի զարգացման հնարավոր հետևանքները:

Ճգնաժամերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինտեգրացիոն միությունում հակաճգնաժամային քաղաքականությունը պետք է մանրամասն ներառի բոլոր արտաքին և ներքին ռիսկերը, որոնք կարող են ի հայտ գալ նման իրավիճակներում: Հումք և բնական ռեսուրսներ ունեցող երկրների համար ամենակարևոր խնդիրը բյուջեի եկամուտների դիվերսիֆիկացումն է և դրանցից կախվածության թուլացումը, ինչին ԵԱՏՄ անդամները դեռևս չեն կարողանում հասնել: ՌԴ-ի, Ղազախստանի և Ղրղզստանի տնտեսությունները չափազանց զգայուն են նավթի գնի տատանումների, իսկ Հայաստանի տնտեսությունը՝ պղնձի գնի տատանումների նկատմամբ: Ռուս-ուկրաինական պատերազմով պայմանավորված մատակարարումների գլոբալ շղթաների խաթարմամբ էլ ավելի են սրվել տնտեսական ռիսկերի ազդեցությունները, ուստի, քաղաքականություն մշակողները պետք է վերանայեն ներկայիս տնտեսական անվտանգության համակարգերը՝ հիմք ընդունելով ճգնաժամերի տեսակներից բխող ռիսկերը և դրանց միաժամանակյա տեղի ունենալու հավանականությունը, ինչպես նաև մշակել ճգնաժամերի գործում վաղաժամ ազդանշման համակարգեր:

Ընդհանուր առմամբ, ճգնաժամերի և տնտեսական անկայունությունների շուրջ քաղաքականության խորը ընկալման համար ձևավորվում է նոր մեթոդներ մշակելու պահանջ: Հատկանշական է, որ աշխատանքում իրականացված էմպիրիկ գնահատման արդյունքում ստացված գնահատականները համահունչ են նաև պատմական զարգացումներին: Ռեցեսիոն ճգնաժամի դեպքում ՎԱՀ մոդելի աղմուկ/ազդանշանի գործակիցները առավել որակյալ են, ինչը պայմանավորված է միաժամանակ տարբեր ճգնաժամերի համակցված տվյալների առկայությամբ, որը թույլ է տալիս գնահատումների իրականացման համար ապահովել առավել լայն միջակայք և հանգեցնում է որակյալ արդյունքների:

Եզրակացություններում և առաջարկություններում հիմնականում ամփոփվել են և հակիրճ ձևակերպվել հետազոտության արդյունքում ստացված հիմնական եզրահանգումներն ու առավել առարկայական առաջարկները:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունները հիմնված են դիտարկվող բնագավառի դասականների, ինչպես նաև ժամանակակից հետազոտողների ուսումնասիրությունների վրա: Մեթոդաբանական և տեղեկատվական առումով աշխատանքում օգտագործված են

պաշտոնական շրջանառության մեջ գտնվող նյութեր և տվյալներ: Այս հանգամանքը թույլ է տվել հեղինակին ապահովել աշխատանքում ստացված արդյունքների անհրաժեշտ հիմնավորվածություն և հավաստիություն:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ բացահայտվել է ԵԱՏՄ երկրների տնտեսության վրա ազդող արտաքին տնտեսական շոկերի փոխանցումային մեխանիզմները և գնահատվել է դրանց ազդեցությունը, ԵԱՏՄ ինտեգրացիոն միավորման համար մշակվել են տնտեսական ճգնաժամերի վաղ ազդանշման միագործոն և բազմագործոն համակարգեր՝ գնահատելով դրանց կիրառման հնարավորությունները, բացահայտվել է ճգնաժամերի բարձր կանխատեսելիություն ապահովող նշանակալի փոփոխականների համախումբը, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ երկրների համար ճգնաժամի առաջացման առավել նշանակալի գործոնները և գնահատվել է դրանց ազդեցության չափը, գնահատվել են տնտեսական ճգնաժամերը ազդանշող նշանակալի փոփոխականների համար շեմային մակարդակները և հաշվարկվել են ճգնաժամի նախազգուշացման շեմային մեծությունները, մշակվել է տնտեսական կայունության գնահատման և մշտադիտարկման լրացուցիչ ցուցանիշների համախումբ, որը կարող է կիրառելի լինել ԵԱՏՄ ինտեգրացիոն քաղաքականության իրացման գործընթացում:

Մեթոդաբանական և մեթոդական տեսանկյունից հետազոտության արդյունքները ընձեռում են լայն հնարավորություն կողմնորոշվելու անցման փուլում գտնվող երկրներում ինտեգրացիոն քաղաքականության ներդաշնակեցման առավել հրատապ հիմնախնդիրների լուծման հարցում:

Ատենախոսության գիտագործնական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել զարգացող երկրներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում տարածաշրջանային ինտեգրման շրջանակներում ճգնաժամերի վաղ ազդանշման քաղաքականության համակարգումն ապահովող ծրագրերի իրատեսականությանը, հակաճգնաժամային քաղաքականության բարելավմանը և արտաքին տնտեսական հարաբերությունների ազդեցության գնահատմանը նվիրված ուսումնասիրությունների և գործնական մշակումների ժամանակ:

Ատենախոսության վերաբերյալ կան ***դիտողություններ և առաջարկություններ,*** որոնք գրախոսվող աշխատանքի թեմայով ուսումնասիրությունների շարունակման դեպքում, մեր կարծիքով, պետք է արժանանան հեղինակի ուշադրությանը: Դրանցից հատկապես անհրաժեշտ է նշել հետևյալները:

1. Հետազոտության առաջին գիտական նորույթը վերաբերում է ԵԱՏՄ անդամ երկրներում տնտեսական ճգնաժամերի ի հայտ գալու ժամանակագրությանը, դրանց դրսևորման և սինխրոնավորման դեպքերին: Գնահատելով հանդերձ ատենախոսի կողմից կատարված վերլուծությունը, գտնում ենք, որ նշված վերլուծությունն իրենից ներկայացնում է ճգնաժամային երևույթների տեսակավորմանը, առանձնահատկությունների ամրագրմանը նվիրված նյութ, որը կարող է որոշակի հիմք ստեղծել ԵԱՏՄ շրջանակներում հակաճգնաժամային ռազմավարության մշակման ժամանակ: Ասվածի հավաստումն այն է, որ սույն վերլուծությունը մեծ վերապահումով կարելի է գիտական նորույթ համարել:
2. Ատենախոսության 1.3. ենթագլխում հեղինակը բավականին մանրամասն և հաջողված կերպով ներկայացնում է ճգնաժամերի վաղ ազդանշման համակարգերի մեթոդական հիմքերը, որը մեր կողմից դիտարկվում է որպես ստացված վերլուծություն:
   Դրանով հանդերձ, ենթագլխի վերնագրում առկա է նաև միջազգային փորձին վերաբերող դրույթ, որին հեղինակը հպանցիկ է անդրադարձել:
   Մասնավորապես՝ միջազգային փորձի ուսումնասիրությունը ենթադրում էր, որ պետք է մանրամասն ներկայացվեին այդ համակարգերի կիրառման առանձնահատկություններն ու արդյունքները կոնկրետ երկրներում (երկրների խմբերում), դրանցից բխեցվեին արժեքավոր հետևություններ:
3. Աշխատանքի 2.2. ենթագլխում հեղինակը բավականին հանգամանալից վերլուծում է տնտեսական շոկերի փոխանցումային մեխանիզմները և այդ շոկերի ազդեցություններն ըստ կրող գործոնների: Իրականացված հետազոտությունը հաջողված համարելով հանդերձ, ցանկալի կլիներ, որպեսզի ատենախոսը փորձեր գնահատված ազդեցությունների հիմքի վրա ներկայացնել այն ռազմավարական/մարտավարական քայլերը, որոնք ի զորու են մեղմելու և/կամ չեզոքացնելու այդ ազդեցությունների բացասական դրսևորումները:
4. Ատենախոսության երրորդ գլխում (մասամբ նաև 2.3. ենթագլխում) հեղինակը փորձ է արել տարբեր փոփոխականների համախմբի և տարբեր մոդել-համակարգերի միջոցով գնահատել ճգնաժամերի վաղ ազդանշման խնդիրները ԵԱՏՄ համատեքստում:

Թեև կատարված է արժեքավոր աշխատանք, կարծում ենք, հետազոտությունն ավելի կշահեր, եթե իր իսկ կողմից արձանագրված շեմային ցուցանիշները համադրվեին մերօրյա իրողությունների հետ՝ հաշվի առնելով նաև ԵԱՏՄ երկրների տնտեսական քաղաքականության տարբեր ուղղությունների ներդաշնակեցման հետ կապված հարցերը:

5. Կառուցվածքային իմաստով, ինչպես նաև հետազոտական նյութի հասցեականության տրամաբանական շղթայի դիտանկյունից, լավ չի ընկալվում, թե ինչու է ԵԱՏՄ անդամ երկրներում ճգնաժամերի վաղ ազդանշման բազմագործոն համակարգը ներառվել երկրորդ գլխում, իսկ միագործոն համակարգը՝ երրորդ գլխում:

   Կարծում ենք, նշված կերպ կատարված տարանջատումը մասամբ խաթարում է հետազոտական նյութի մատուցման շարունակականությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները էապես չեն ազդում հետազոտության արժանիքների վրա, այլ հետապնդում են Հայաստանի Հանրապետությունում ինտեգրացիոն քաղաքականության նպատակայնության բարձրացման, զարգացող երկրներում ճգնաժամերի վաղ ազդանշման արդիական խնդիրների լուծմանը և զարգացմանն ուղղված քաղաքականությանը նվիրված հետագա ուսումնասիրությունների արդյունավետության բարձրացման նպատակ:

Մ. Հովսեփյանի թեկնածուական ատենախոսությունն ունի ընդգծված գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որտեղ դրված և լուծված են հանրապետության համար կարևոր ու արդիական խնդիրներ:

Հեղինակը հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական բավարար մակարդակ, ինչի մասին են վկայում ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետության հակաճգնաժամային քաղաքականության կատարելագործման, մասնավորապես՝ համաշխարհային տնտեսության զարգացման շրջանակներում ինտեգրացիոն քաղաքականությունների համակարգման հարցերով զբաղվող մարմինների գործունեության հիմնախնդիրների լուծման ուղղությամբ որակապես նոր մոտեցումների ներդրման ընթացքում:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, «Տնտեսական ճգնաժամերի վաղ ազդանշման հնարավորությունները և դերը ինտեգրացիոն գործընթացներում (ԵԱՏՄ երկրների օրինակով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև՝ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է Ը.00.06 - «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԱՄԲԻՈՆԻ ՊՐՈՖԵՍՈՐ,
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ **Դ.ՀԱԽՎԵՐԴՅԱՆ**

ՊԱՐՈՆ Դ.ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ն.ԴԱՐԲԻՆՅԱՆ**
14.08.2023.